ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0024, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26/1

«15» 03 2021թ.
ՀՀՊ 199-2021

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ
ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻՆ ԵՎ
ԳԵՎՈՐԳ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ
(ք. Երևան, Մաշտոցի 33/1 շենք,
թիվ 5 գրասենյակ)

Հարգելի փաստաբաններ,

2021թ. մարտի 11-ին Հանրապետության նախագահի աշխատակազմ մուտքագրված Ձեր դիմումին ի պատասխան հայտնում ենք, որ Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի՝ քաղաքացիության վերաբերյալ լիազոր մարմնի կողմից տրված ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկանքը Հանրապետության նախագահի ընտրության գործընթացում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվել է Ազգային Ժողով:

Ինչ վերաբերում է Eurasia House International ընկերության փաստաթղթերին, հայտնում ենք, որ Eurasia House International-ը 2000-ականների սկզբին Արմեն Սարգսյանի կողմից հիմնադրված բարեգործական կազմակերպություն է, որի դուստր կազմակերպությունը կոչվում էր Eurasia Center՝ ինստիտուտ Քեմբրիջի համալսարանում: Այդ կազմակերպության շնորհիվ ավելի քան հարյուր հայ երիտասարդներ են կրթություն ստացել Մեծ Բրիտանիայում և այլ երկրներում՝ մասնավորեապես, Քեմբրիջի համալսարանում, Հարվարդի համալսարանում և աշխարհի այլ առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություններում: 2010թ. սկզբին այդ կազմակերպության գործունեությունը դադարել է, ինչպես նաև սկսվել է մայր ընկերության լուծարման գործընթաց:

Eurasia House International-ից բացի Արմեն Սարգսյանը տարբեր կարգավիճակներով համագործակցել է բազմաթիվ այլ կազմակերպությունների հետ, ներառյալ՝ մասնակցելով տարբեր երկրներում կազմակերպված միջոցառումներին: Միանգամայն հնարավոր է, որ

որոշ տվյալների բազաներում պահպանված լինեն Արմեն Սարգսյանի քաղաքացիության վերաբերյալ հին տեղեկություններ:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում ընդգծել, որ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, դիվանագիտական ծառայության մեջ գտնվելու ժամանակահատվածում Արմեն Սարգսյանը չի կատարել որևէ այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից, ինչպես նաև անձամբ չի զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

Դիմումում նշված վերջին հարցի կապակցությամբ տեղեկացնում ենք, որ պետական դիվանագիտական ծառայության իրականացման ընթացքում ՀՀ օրենսդրությամբ պարտադիր հրապարակման ենթակա տվյալները Արմեն Սարգսյանը յուրաքանչյուր տարի ներկայացրել է իր կողմից լրացվող հայտարարագրում: Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի վերաբերյալ հայցվող այլ տվյալներ չենք կարող տրամադրել:

Հարգանքով՝

Էդ. ՏԱՐԱՍՅԱՆ

Կատարող Անի Մուրադյան
Հեռ. 010 71 00 26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ

0077, ԵՐԵՎԱՆ, ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂ. 26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՄԱՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

Փ. ՀրեռաՀ

Մաշտոցի 33/1 շ.

թիվ 5 գրասենյակ

Հասցե՝ Գևորգյանների

Գևորգ Մկրտչյանների

ՀՀՀ 199-2021